

# «Հոգեկան առողջության իրավունքահեն քաղաքականությունը՝ որպես ուղենիշ»

**«ԱՅԼԸՆՏՐԱՆՔ»**
**ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ**

# «Հոգեկան առողջության իրավունքահեն քաղաքականությունը՝ որպես ուղենիշ»

**Ծրագիրն իրականացվում է՝**

- «Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» (ԴԱՏԱ) ծրագրի շրջանակում՝ Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի միջոցով:

**Ծրագիրն իրականացնող «Այլընտրանք» կոնսորցիումի անդամ կազմակերպություններն են՝**

- «Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ն
- «Իրավական հետազոտության և զարգացման կենտրոն» ՀԿ-ն
- «Առողջապահության քաղաքականության և նորարարութան կենտրոն» ՀԿ
- «Ջերմիկ անկյուն» Հիմնադրամը:

# Ծրագրի նպատակն է

Աջակցել ՀՀ-ում հոգեկան առողջության ոլորտում փոքր տների և հարակից ծառայությունների համակարգի ներդրման փաստահեն քաղաքականության ձևավորմանը:

**Խնդիրներ.**

- հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց զգալի մասը դեռևս գտնվում է խնամքի և հոգեբուժական հաստատություններում,
- մեկուսացած են համայնքից և զրկված որոշումներ կայացնելու հնարավորությունից,
- ՀՀ-ում հոգեկան առողջության ոլորտի քաղաքականության մշակման գործընթացը մասնակցային և հետազոտահեն չէ:

# Ծրագրի հիմնական գործողությունները

# Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պաշտպանության ցանցի հիմնադրում



Հուլիսի 12-ին տեղի ունեցավ ցանցի հիմնադրման հանդիպումը

- Քննարկվեցին ոլորտային խնդիրները
- Հետաքրքրված անձինք/կազմակերպությունները հայտ ներկայացրեցին՝ ցանցին անդամագրվելու համար

Ձևավորվեց ցանցի հիմնական անդամների կազմը

# Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պաշտպանության ցանց

**Նպատակն է՝**

ՀՀ-ում հոգեկան առողջության ոլորտում շահագրգիռ կողմերի համար համագործակցային հարթակի ձևավորումը:

**Խնդիրներն են՝**

Ձևավորել միասնական դիրքորոշում հոգեկան առողջության ոլորտին առնչվող իրավական ակտերում առկա խնդիրների, դրանց կիրառության վերաբերյալ՝ շեշտադրելով և խթանելով ապաինստիտուցիոնալացման անհրաժեշտությունը:

**Խնդիրներն են՝**

- Մոբիլիզացնել և փոխհամաձայնեցնել ոլորտի ռեսուրսները՝ նպատակ ունենալով՝
    - Լսելի դարձնել շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և նրանց ծառայություններ մատուցողների տեսակետները:
    - Ձևավորել վստահության մթնոլորտ տարբեր դերակատարների միջև՝ խթանելով նրանց համագործակցությունն ու համատեղ ծրագրերի իրականացումը, փորձի և տեղեկատվության փոխանակումը:
    - Իրականացնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:

# Ցանցի արժեքները

- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց **իրավունքների և շահերի առաջնահերթությունը**,

- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց **անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքը,**

- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց **իրական մասնակցայնությունը որոշումների կայացման գործընթացում**։

## Ցանցի գործունեության հիմքում ընկած սկզբունքներն են՝

- Փոխադարձ հարգանք և զգայունություն,
- Ընդհանուր գաղափարական հենք,
- Պատասխանատվության ընդհանուր շրջանակ,
- Փորձի, գիտելիքների և հմտությունների զարգացում:

# Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պաշտպանության ցանցի հանդիպումներ

- Ցանցի առաջին աշխատանքային հանդիպում – Սեպտեմբերի 24
- Ցանցի 2-րդ աշխատանքային հանդիպում – Հոկտեմբերի 20 (այց Գեղանիստ համայնք, Ձերմիկ անկյուն հիմնադրամի խմբային տուն)

# Ուղեցույց-գործիքակազմի մշակում



*Մշակվել է ուղեցույց-
գործիքակազմ, որի նպատա
նպաստել հոգեկան
առողջության ոլորտում
փաստահեն հետազոտությո
ջատագովություն
իրականացնելուն*

# Եռօրյա աշխատաժողով
*(Վանաձոր, սեպտեմբերի 17-19)*




*Նպատակն էր՝ զարգացնել ուղեցույց-գործիքակազմը կիրառողների կարողությունները*

# ՀՀ հոգեկան առողջության բնագավառում փոքր խմբային տների ուսումնասիրություն




Նպատակներն են.

- ՀՀ-ում խմբային տների մոդելի ուսումնասիրությունը և նկարագրությունը,
- Փոքր խմբային տների իրավունքահենության ապահովմանն ուղղված առաջարկությունների մշակումը,
- Փոքր խմբային տների և հարակից ծառայությունների համակարգի զարգացմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

# Ծրագրի լուսաբանում




**Ֆեյսբուքյան էջ՝ Այլընտրանք – Alterchoice**
**Կայքի հղումը՝ Alterchoice.net**

